յայնմ աւուր տաւն դիպեցաւ յիշատակի մեծին Յովաննու որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: *21* Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, եւ բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽաղ, եւ զիւր արքիդիակոնն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր, զի երթիցեն նոքա, պէտք զի՛նչ եւ իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: *22* Եւ ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն հաղորդութեանն եւ անդ կատարեսցեն: *23* Եւ յայնմ գիշերի ցայգապաշտաւն մեծ եղեւ ի բանակին առ կաթողիկոսին:

24 Իսկ իբրեւ առաւաւտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. եւ մինչ Գնէլն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա: *25* Ապա ելանէր հրաման յարքունուստ՝ արտաքս[1] ունել եւ տանել սպանանել: *26* Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, եւ էր հեծեալ յերիվարին իւրում, իբրեւ մերձ եղեւ ի հրապարակն արքունի, եւ անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք եւ սպարակիրք հետեւակք, որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն Գնէլ, եւ ձեռն յետս կապէին զնա, եւ առեալ գնային ի տեղի կառափելոյն: *27* Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում: *28* Իսկ իբրեւ տեսանէր թէ կալան զայր իւր եւ կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտաւն մարդկան բանակին առ Աստուած կատարէր, մինչ դեռ առաւաւտին աղաւթքն մատչէին. եւ անդ Ներսէս մեծ եպիսկոպոսապետն: *29* Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն, ճչեալ մեծաձայն. Վաղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու եւ յանցանաց խողխողեն: *30* Իսկ նորա խափանեալ զպաշտաւնն, ընթանայր ի խորանն արքունի. հասեալ ի դրացն ի ներքս առ թագաւորն անգանէր: *31* Իսկ թագաւորն իբրեւ տեսանէր զմեծ քահանայապետն, գիտացեալ զբարեխաւսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն զի մի՛ մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյթ կնջանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր. քնոյ պատճառ եղեալ՝ զի զնորա բանսն մի՛ լուիցէ:

32 Իսկ սուրբ Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զթագաւորէն. խաւսէր ընդ նմա, եւ ասէր. Թագաւոր, յուշ լիցի քեզ քո Տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ի բնական բարձրութենէն, եւ եղեւ եղբայր ծառայութեան մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ իրիք, այլ զի լիցի վարդապետ

1 *Օրինակ մի չունի*՝ արտաքս